

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2026Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	9
3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ	12
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ.....	15
5. ԱՄՓՈՓՈՒՄ	17

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՍՀ, ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՏԱ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԳՄՍ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՇՄ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԿԵ, ՏԿԵՆ	ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության գործընկեր երկրների տնտեսական ակտիվության միտումները 2026թ. առաջին կիսամյակում երկրից երկիր տարբերվել են՝ պայմանավորված ինչպես ներքին պահանջարկի և ներդրումային ակտիվության տարբեր զարգացումներով, այնպես էլ արտաքին և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցություններով: ԱՄՆ-ում և Չինաստանում պահպանվել են համեմատաբար բարձր աճի տեմպեր (համապատասխանաբար՝ 2.4% և 4.7%), մինչդեռ Եվրագոտում և ՌԴ-ում տնտեսական ակտիվությունն ավելի զուսպ է եղել (համապատասխանաբար՝ 0.8% և 0.4%):

Փետրվարից Մերձավոր Արևելքում սկիզբ առած հակամարտությունը և դրա հետևանքով էներգակիրների գների աճը հանգեցրել են գնաճի արագացման: Այս զարգացումներին զուգահեռ՝ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը և Չինաստանի ժողովրդական բանկն անփոփոխ են թողել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը, Եվրոպական կենտրոնական բանկը, էներգակիրների բարձր գներով և պահպանվող գնաճային ռիսկերով պայմանավորված, այն հունիսին մի փոքր բարձրացրել է, իսկ ՌԴ կենտրոնական բանկն առաջին կիսամյակի ընթացքում չորս անգամ նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը:

Համաշխարհային տնտեսությունում առկա զարգացումների և միտումների պայմաններում ՀՀ-ում 2026թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է տնտեսական ակտիվության 7.9% աճ: Տնտեսական ակտիվության աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների, արդյունաբերության և շինարարության աճերով (նպաստումները՝ համապատասխանաբար 5.7, 1.9 և 1.7 տոկոսային կետ): **Առևտրի աճի նպաստումը չափազանց փոքր է եղել՝ 0.1 տոկոսային կետ: Իսկ գյուղատնտեսությունում արձանագրված 11.9% անկումը շուրջ 1.0 տոկոսային կետով հակազդել է տնտեսական ակտիվության աճին:**

2026թ. առաջին կիսամյակում *արդյունաբերության* ճյուղում գրանցվել է 10.8% թողարկման աճ՝ հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, ինչպես նաև մշակող արդյունաբերություն ենթաճյուղերի աճերով: Արդյունաբերության աճին նպաստել են նաև էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, ինչպես նաև ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղերը:

Մշակող արդյունաբերության աճն առավելապես պայմանավորված է եղել հիմնային մետաղների, սննդամթերքի, խմիչքների, ինչպես նաև քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունների աճերով:

2026թ. առաջին կիսամյակում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության* համախառն արտադրանքը նվազել է 11.9%-ով՝ պայմանավորված բուսաբուծության և անասնաբուծության նվազումներով:

Շինարարության ճյուղում գրանցված 24.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել կազմակերպությունների, բնակչության, պետական բյուջեի և համայնքների միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության աճին հիմնականում նպաստել են անշարժ գույքի հետ կապված գործունեություն (հիմնականում՝ բնակարանաշինություն), կրթություն, ինչպես նաև էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ոլորտներում շինարարության ծավալների աճերը:

Ծառայություններն աճել են 11.0%-ով՝ հիմնականում պայմանավորված տեղեկատվություն և կապ (մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ), ֆինանսական և ապահովագրական գործունեություն (մասնավորապես՝ բանկերի գործունեություն), տրանսպորտ (մասնավորապես՝ օդային և ցամաքային տրանսպորտ), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում (մասնավորապես՝ ռեստորաններ և հանրային սննդի շարժական կետեր) ենթաճյուղերի աճերով:

Առևտրի աճը տարեցտարի դանդաղում է: Այսպես՝ 2024-ի առաջին կիսամյակի աճի տեմպը 22.9% էր, 2025-ի նույն ժամանակահատվածում՝ 3.9%, իսկ 2026-ի առաջին վեց ամիսների տվյալներով՝ ընդամենը 0.9%: Ի դեպ, աճը պայմանավորված է եղել մանրածախ առևտրի աճով: Մինչդեռ մեծածախ առևտուրը նվազել է՝ հակազդելով ընդհանուր առևտրի աճին: Մեծածախ առևտրի նվազումը լրջագույն բացասական ազդակ է, քանի որ կարող է վկայել գործարար միջավայրի վատթարացման մասին:

2026թ. հունվար-հունիս ամիսներին արտաքին ապրանքաշրջանառության ծավալները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ պահպանվել են գրեթե նույն մակարդակում՝ կազմելով 9,570.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 0.1%-ով պակաս: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են դոլարային արտահայտությամբ արտահանման նվազում և ներմուծման աճ. **արտահանումը**

նվազել է 6.7%-ով՝ կազմելով 3,431.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումն աճել է 4.0%-ով և կազմել 6,139.6 մլն ԱՄՆ դոլար:

Արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է վերաարտահանման նվազմամբ և հայկական ծագման որոշ ապրանքատեսակների արտահանման սահմանափակումներով: Ապրանքների արտահանման իրական ծավալները նվազել են 6.0%-ով:

Արտահանման՝ դոլարային արտահայտությամբ 6.7% նվազմանը հիմնականում նպաստել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը (պայմանավորված վերաարտահանման ծավալների կրճատմամբ)՝ 17.8 տոկոսային կետով և «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախումբը (պայմանավորված արտահանման սահմանափակումներով)՝ 1.0 տոկոսային կետով:

Արտահանման նվազմանը հակազդել են հանքահումքային (հիմնականում՝ պղնձի, մոլիբդենի և թանկարժեք մետաղների հանքանյութերի ապրանքատեսակների) և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման աճերը՝ համապատասխանաբար՝ 11.3 և 0.8 տոկոսային կետով:

Ինչպես արդեն նշվեց, 2026թ. հունվար-հունիս ամիսներին արձանագրվել է դոլարային արտահայտությամբ ներմուծման ծավալների 4.0%-ով աճ: Ներմուծման իրական ծավալները 10.3%-ով նվազել են, իսկ ներմուծվող ապրանքների գներն աճել են 10.9%-ով:

2026թ. հունվար-հունիս ամիսներին ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների աճին ամենամեծ նպաստումն ունեցել են «Մեքենաներ և սարքավորումներ» (5.0 տոկոսային կետով), «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (3.1 տոկոսային կետով) և «Պատրաստի սննդի արտադրանք» (2.4 տոկոսային կետով) ապրանքախմբերը:

Ներմուծման աճին հիմնականում հակազդել և 12.3 տոկոսային կետի բացասական նպաստում է ունեցել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նվազումը՝ պայմանավորված վերաարտահանման ծավալների կրճատմամբ:

2026թ. առաջին կիսամյակում առևտրաշրջանառության աշխարհագրական կառուցվածքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ որոշակիորեն փոփոխվել է: Արտաքին առևտրի կառուցվածքում այլ երկրների և ԵՄ երկրների դերը բարձրացել է, իսկ ԵԱՏՄ երկրների դերը՝ նվազել:

ՀՀ ամենախոշոր առևտրային գործընկեր ՌԴ հետ առևտրաշրջանառության ծավալները հաշվետու տարում նվազել են 20.9%-ով (7.2 տոկոսային կետով): Նվազել են թե՛ ներմուծումը (31.4%-ով՝ հիմնականում վերաարտահանման նպատակով ներմուծվող թանկարժեք մետաղների ծավալների նվազմամբ պայմանավորված) և թե՛ արտահանումը (4.2%-ով՝ պայմանավորված վերաարտահանման կտրուկ նվազմամբ և որոշ ապրանքատեսակների արտահանման սահմանափակումներով):

2026թ. առաջին կիսամյակում արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ վատթարացել է 21.6%-ով և կազմել 2,708.3 մլն ԱՄՆ դոլար: Վատթարացման պատճառն այն է, որ մի կողմից նվազել է արտահանումը, իսկ մյուս կողմից աճել է ներմուծումը:

2026թ. առաջին կիսամյակում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.5%-ով՝ կազմելով 310,787 դրամ: Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել են մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, մշակող արդյունաբերության, ինչպես նաև առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտներում աշխատավարձերի աճը: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 9.1%-ով՝ կազմելով 241,454 դրամ, իսկ ոչ պետականում՝ 4.3%-ով և կազմել 337,174 դրամ: Իրական աշխատավարձը 4.6% գնաճի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է ընդամենը 0.9%-ով: **Այսինքն՝ բարձր տնտեսական աճի արդյունքում ստեղծված լրացուցիչ եկամուտի միայն շատ փոքր մասն է բաժին հասել վարձու աշխատողներին:**

2026թ. առաջին կիսամյակի ընթացքում գնաճն արագացել է և գտնվել ԿԲ թիրախից բարձր մակարդակում: Այդ պայմաններում ԿԲ-ն դադարել է մեղմացնել դրամավարկային պայմանները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնելով անփոփոխ (6.5%): Գնաճի արագացումը զուգակցվել է բնականոն գնաճի արագացմամբ: 12-ամսյա գնաճը հունիսին կազմել է 5.1%, միջին գնաճը՝ 4.6%, իսկ 12-ամսյա բնականոն գնաճը (որի կազմում չեն ներառվում սեզոնային պարենային ապրանքներն ու ծառայությունները) կազմել է 4.9%:

Չնայած 2026թ. առաջին կիսամյակում ԿԲ-ն անփոփոխ է թողել քաղաքականության տոկոսադրույքը, այնուամենայնիվ, պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել: Ավանդների և վարկերի տոկոսադրույքները ևս որոշակիորեն նվազել են, իսկ հիպոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները շարունակում են կայուն մնալ:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց զուտ փոխանցումները 2026թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել են: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով զուտ փոխանցումները 2026թ. առաջին կիսամյակի դրությամբ կազմել են 1,377.4 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.3 անգամ:

Ամփոփելով 2026թ. առաջին կիսամյակի տնտեսական զարգացումների հակիրճ նկարագրությունը՝ կարելի է փաստել, որ արձանագրված բարձր տնտեսական ակտիվության ետևում «թաքնված են» մի շարք մտահոգիչ միտումներ: Տնտեսական ակտիվության արձանագրված բավական բարձր ցուցանիշն ինքնին չի վկայում տնտեսության համաչափ և կայուն զարգացման մասին. աճի հիմնական շարժիչներն են եղել ծառայություններն ու շինարարությունը, մինչդեռ գյուղատնտեսությունում արձանագրված երկնիշ անկումը, առևտրի գրեթե լճացումը, արտահանման և ապրանքների իրական ներմուծման ծավալների նվազումը վկայում են տնտեսական լուրջ խնդիրների մասին: Տնտեսական աճի բարձր տեմպը չի ուղեկցվում տնտեսության արտադրական բազայի համաչափ ընդլայնմամբ, արտահանման կարողությունների մեծացմամբ և արտաքին առևտրային դիրքի բարելավմամբ՝ առանց որոնց նման աճն ընդամենը արտացոլում է առանձին ոլորտների ժամանակավոր ակտիվությունը, բայց ոչ տնտեսության հիմնարար ներուժի բարելավումը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների փաստացի մեծությունը 2026թ. առաջին կիսամյակում կազմել է 1,643.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 14.7%-ով կամ 210.1 մլրդ դրամով ավելի (Աղյուսակ 1): Աճը պայմանավորված է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պաշտոնական դրամաշնորհների ավելացմամբ: Բյուջեի եկամուտների հավաքագրման կատարողականը կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 106.0%:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,433.1	1,513.4	1,550.9	1,643.2	106.0
<i>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</i>	<i>1,356.0</i>	<i>1,461.7</i>	<i>1,492.2</i>	<i>1,555.9</i>	<i>104.3</i>
<i>Պաշտոնական դրամաշնորհներ</i>	<i>3.6</i>	<i>6.5</i>	<i>6.4</i>	<i>20.6</i>	<i>322.1</i>
<i>Այլ եկամուտներ</i>	<i>73.5</i>	<i>45.2</i>	<i>52.3</i>	<i>66.7</i>	<i>127.6</i>

Բյուջեի ընդհանուր եկամուտները հիմնականում հավաքագրվել են ներքին աղբյուրներից՝ 98.7% կամ 1,622.6 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ստացված պաշտոնական դրամաշնորհների գումարային մեծությունը կազմել է 20.6 մլրդ դրամ կամ բյուջեի ընդհանուր եկամուտների 1.3%-ը:

Հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը՝ 94.7%-ը կամ 1,555.9 մլրդ դրամը և ճշտված պլանով ծրագրված մեծությունից 4.3%-ով ավելի են (Աղյուսակ 2): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանք 14.7%-ով կամ 199.9 մլրդ դրամով ավելի են՝ հիմնականում պայմանավորված ԱԱՀ-ի 11.1%, եկամտային հարկի 12.7%, շահութահարկի 11.5% և բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով մուտքերի 83.7% աճով, որոնք հարկային եկամուտների և պետական տուրքերի աճին նպաստել են համապատասխանաբար 3.4, 3.3, 2.5 և 1.8 տոկոսային կետով:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, մլրդ դրամ

	2025թ. առաջին կիսամյակի փաստացի	2026թ. առաջին կիսամյակի փաստացի	2026թ. առաջին կիսամյակը 2025թ. առաջին կիսամյակի նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,356.0	1,555.9	114.7
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,315.6	1,498.1	113.9
<i>ԱԱՀ</i>	<i>411.4</i>	<i>457.1</i>	<i>111.1</i>
<i>Ակցիզային հարկ</i>	<i>66.9</i>	<i>75.7</i>	<i>113.1</i>
<i>Շահութահարկ</i>	<i>290.3</i>	<i>323.7</i>	<i>111.5</i>
<i>Մաքսավորք</i>	<i>36.4</i>	<i>35.5</i>	<i>97.4</i>
<i>Եկամտային հարկ</i>	<i>350.3</i>	<i>394.8</i>	<i>112.7</i>
<i>Շրջանառության հարկ</i>	<i>35.4</i>	<i>41.8</i>	<i>117.9</i>
<i>Սոցիալական վճար (կուրակային կենսաթոշակի գծով)</i>	<i>57.6</i>	<i>66.0</i>	<i>114.7</i>

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	29.7	54.6	183.7
Այլ հարկեր	37.5	49.1	130.7
2. Պետական տուրք	40.5	57.8	142.9

Ավելացված արժեքի հարկը հարկային եկամուտների և պետական տուրքերի մեջ ամենամեծ հարկատեսակն է՝ 29.4% տեսակարար կշռով: Այն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից 45.7 մլրդ դրամով ավելի է, ինչը մեծ մասամբ պայմանավորված է ՀՀ-ում արտադրվող ապրանքների ու ծառայությունների շրջանառությունից մուտքերի աճով:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի 25.4%-ը կազմում են եկամտային հարկի գծով մուտքերը, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 12.7%-ով կամ 44.5 մլրդ դրամով:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի մեջ հաջորդ բարձր տեսակարար կշիռը՝ 20.8%, ունի շահութահարկը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.5%-ով կամ 33.4 մլրդ դրամով:

2026թ. առաջին կիսամյակում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի 4.9%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին, որի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը պայմանավորված է ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի աճով:

Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են շուրջ 54.6 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 3.5%-ը: Դրանք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 83.7%-ով կամ 24.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի 2.4 անգամ (22.9 մլրդ դրամ) աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 57.8 մլրդ դրամ պետական տուրքեր՝ 47.8%-ով գերազանցելով առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը: Պետական տուրքերի 60.9%-ը կազմում են լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերը, որոնք կազմել են 35.2 մլրդ դրամ՝ 82.3%-ով (15.9 մլրդ դրամով) գերազանցելով կիսամյակային ծրագրային ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված վիճակախաղերի, շահումներով խաղերի և մետաղադրամով և/կամ թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի և

խաղերի բնագավառից գանձվող տուրքերի աճով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պետական տուրքերն աճել են 42.9%-ով՝ 17.4 մլրդ դրամով:

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել են շուրջ 20.6 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ 3.2 անգամ գերազանցելով ծրագրված մուտքերը: Նշված գումարից 2.1 մլրդ դրամը ստացվել է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում: Նպատակային ծրագրերից 4-ի շրջանակներում նախատեսված 1.3 մլրդ դրամ դրամաշնորհները չեն ստացվել, իսկ 8 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են մասնակիորեն՝ 23.5%-ով: Հաշվետու ժամանակահատվածում նաև ստացվել են 18.5 մլրդ դրամի պետբյուջեով չնախատեսված բյուջետային աջակցության դրամաշնորհներ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի այլ եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 9.3%-ով կամ 6.8 մլրդ դրամով և կազմել շուրջ 66.7 մլրդ դրամ՝ 27.6%-ով կամ 14.4 մլրդ դրամով գերազանցելով առաջին կիսամյակի ծրագրված ցուցանիշը: Բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների ու իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ: Վերջինները կազմել են համապատասխանաբար՝ 16.8 մլրդ դրամ և 14.0 մլրդ դրամ: Ծրագրային ցուցանիշի համեմատ գերազանցում է գրանցվել նաև իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից, ինչպես նաև ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով: Դրանց մեծությունները կազմել են համապատասխանաբար՝ 14.8 մլրդ դրամ և 12.5 մլրդ դրամ: **Ի դեպ, իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 8.5%-ով, չնայած որ կառավարող ուժն իշխանության է եկել այլ լոզունգներով:**

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներն աճել են 13.7%-ով, իսկ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից նվազել են 72.0%-ով:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով բարձր կատարողականը հիմնականում

պայմանավորված է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ում պետական մասնակցության շահաբաժինների՝ համապատասխանաբար 11.8 մլրդ դրամի և 2.0 մլրդ դրամի ստացմամբ:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարները ճշտված պլանի ցուցանիշին զգալիորեն՝ 43.7%-ով գերազանցել են, ինչը պայմանավորված է բյուջեի եկամուտների գերակատարման և ծախսերի զգալի թերակատարման հետևանքով լրացուցիչ ազատ միջոցներ կուտակվելով՝ փոխանակ դրանք բյուջետային ծախսերի ձևով տնտեսությանը «վերադարձվելին»:

Այսինքն՝ իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը փաստացի զսպել է տնտեսության զարգացումը:

Թեև 2026թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի եկամուտները գերակատարվել են և նախորդ տարվա համեմատ զգալիորեն աճել, այնուամենայնիվ, դա չի վկայում արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն վարելու մասին, քանի որ եկամուտների բարձր կատարողականը միաժամանակ ուղեկցվել է ծախսերի զգալի թերակատարմամբ, ինչի հետևանքով ձևավորվել են լրացուցիչ ազատ միջոցներ, որոնք չեն ուղղվել տնտեսություն՝ բյուջետային ծախսերի միջոցով: Այսպիսով, պետական ֆինանսների կուտակային արդյունքը, փոխանակ խթանելու տնտեսական ակտիվությունը, վերածվել է դրա զսպման գործոնի:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2026 թվականի առաջին կիսամյակում կազմել են 1,575.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 7.0%-ով կամ 103.6 մլրդ դրամով ավելի: Աճը հիմնականում պայմանավորված է սոցիալական նպաստների ու կենսաթոշակների, սուբսիդիաների, աշխատանքի վարձատրության և տոկոսավճարների գծով ծախսերի ավելացմամբ:

Իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերը զգալիորեն նվազել են:

Պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 99.3%-ը կամ շուրջ 1,565 մլրդ դրամը՝ կիսամյակային ծրագրով պլանավորվածից 15.1%-ով պակաս: Բյուջեի ծախսերի մնացած 0.7%-ը կամ շուրջ 11 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից՝ կազմելով կիսամյակային ծրագրի 22.1%-ը:

Բյուջեի ծախսերը ճշտված պլանի նկատմամբ զգալիորեն թերակատարվել են 16.8%-ով կամ 317.4 մլրդ դրամով: Ընդ որում, թերակատարվել են և՛

ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերը՝ համապատասխանաբար 10.3%-ով և 43.6%-ով: Թերակատարված 317.4 մլրդ դրամի 49.3%-ն ընթացիկ ծախսերի, իսկ 50.7%-ը ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով է (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,472.3	1,829.7	1,893.3	1,575.9	83.2
<i>Ընթացիկ ծախսեր</i>	<i>1,177.1</i>	<i>1,476.2</i>	<i>1,522.4</i>	<i>1,366.1</i>	<i>89.7</i>
<i>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</i>	<i>295.2</i>	<i>353.5</i>	<i>370.8</i>	<i>209.8</i>	<i>56.6</i>

Ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչները թերակատարվել են:

Ճշտված պլանի նկատմամբ 156.3 մլրդ դրամով թերակատարմամբ հանդերձ ընթացիկ ծախսերը 2025-ի առաջին կիսամյակի ցուցանիշից 16.1%-ով (189.0 մլրդ դրամով) ավելի են՝ հիմնականում պայմանավորված սոցիալական նպաստների և կենսաթոշակների, սուբսիդիաների, աշխատանքի վարձատրության և տոկոսավճարների աճով՝ համապատասխանաբար 122.4, 23.7, 13.9 և 12.9 մլրդ դրամով:

Ճշտված պլանի նկատմամբ ամենացածր կատարողականը՝ 73.1%, արձանագրվել է ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար կատարվող ծախսերի գծով, ինչը մասամբ պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի շրջանակներում ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի 68.3% կատարողականով:

Սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերը թերակատարվել են 9.2%-ով: Հատկապես ցածր կատարողական է արձանագրվել «Ղարաբաղից տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն» և «Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառումների գծով՝ համապատասխանաբար 53.2% և 86.1%:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերի 23.1%-ով (122.4 մլրդ դրամով) աճը հիմնականում պայմանավորված է առողջության համընդհանուր ապահովագրության ներդրմամբ, որի գծով ծախսերը կազմել են 97.9 մլրդ դրամ, ինչպես նաև աշխատանքային կենսաթոշակների՝ 11.2%-ով (16.1 մլրդ դրամով) և

անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրման ծախսերի 2.7 անգամ (12.9 մլրդ դրամով) աճով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,472.3	1,829.7	1,893.3	1,575.9	83.2
Ընթացիկ ծախսեր	1,177.1	1,476.2	1,522.4	1,366.1	89.7
Աշխատանքի վարձատրություն	108.9	125.7	131.0	122.8	93.8
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	38.8	58.0	65.5	47.8	73.1
Տոկոսավճարներ	169.4	204.0	194.7	182.3	93.6
Սուբսիդիաներ	90.8	116.6	116.9	114.5	98.0
Դրամաշնորհներ	133.2	157.3	152.8	136.9	89.6
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	530.5	660.2	719.1	652.9	90.8
Այլ ծախսեր	105.6	154.4	142.5	108.8	76.4
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	295.2	353.5	370.8	209.8	56.6
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	295.8	358.5	375.8	212.1	56.4
Շենքեր և շինություններ	283.6	334.7	342.6	197.0	57.5
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	10.6	15.9	25.1	13.3	52.8
Այլ հիմնական միջոցներ	1.6	7.9	8.1	1.9	23.5
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(0.6)	(5.0)	(5.0)	(2.3)	45.9

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի (տոկոսավճարների) 7.6%-ով կամ (12.9 մլրդ դրամով) աճը հիմնականում արձանագրվել է ներքին տոկոսավճարների ծախսերում: Այդպիսի աճը կանխատեսելի էր, քանի որ զգալիորեն աճել է շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի ծավալը, իսկ ներքին պարտքն արտաքինի համեմատ էապես ավելի «թանկ պարտք» է:

2026թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի կապիտալ ծախսերը կատարվել են 56.4%-ով՝ հիմնականում պայմանավորված «Հանրակրթական և

նախադարձական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում իրականացված 46.4 մլրդ դրամի կապիտալ ծախսերի, «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի շրջանակներում իրականացված 12.7 մլրդ դրամի կապիտալ ծախսերի և «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի շրջանակներում իրականացված 126.1 մլրդ դրամի կապիտալ ծախսերի կատարողականով: **Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի կապիտալ ծախսերը նվազել են 28.3%-ով (83.7 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի 43.9%-ով (98.5 մլրդ դրամով) նվազմամբ:**

Ի դեպ, կապիտալ ծախսերի դեպքում ևս թերակատարումն առկա է դրանց բոլոր բաղադրիչների գծով:

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

2026թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ կառավարության որոշմամբ՝ առաջին կիսամյակում նախատեսվել էր 170, իսկ ճշտված ծրագրով՝ 174 բյուջետային ծրագրերի իրականացում 48 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Առաջին կիսամյակում փաստացի միջոցներ են օգտագործվել 167-ի գծով, ընդ որում՝ ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները, ըստ անհրաժեշտության, վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին:

Ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում նախատեսված 878 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 5 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել է 768-ը կամ ճշտված պլանով ծրագրվածի 87.5%-ը:

Ի դեպ, պետական բյուջեի ծախսերի՝ առաջին կիսամյակում արձանագրված 16.8% կամ 317.4 մլրդ դրամ թերակատարման զգալի մասը չորս նախարարությունների՝ ՏԿԵ, ԱՍՀ, ԿԳՄՍ և ՊՆ, պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով է՝ համապատասխանաբար 59.5 մլրդ դրամ, 58.9 մլրդ դրամ, 56.2 մլրդ դրամ և 42.2 մլրդ դրամ:

Իսկ տոկոսային արտահայտությամբ առավել նշանակալի են ԲՏԱ, ՏԿԵ և ԿԳՄՍ նախարարությունների պատասխանատվության ներքո իրականացվող ծրագրերի գծով արձանագրված թերակատարումները՝ համապատասխանաբար 66.7%, 39.2% և 23.9%:

Աղյուսակ 5-ում առանձնացված են կենսական նշանակություն ունեցող մի քանի ծրագրեր, որոնց կատարողականը շարունակում է մնալ խիստ ցածր (որոշների դեպքում՝ նույնիսկ ծրագրվածի կեսից պակաս:

Աղյուսակ 5. 2026թ. առաջին կիսամյակում իրականացված որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ

N	Ծրագիր	Պատասխանատու	2026թ. առաջին կիսամյակի ճշտված պլան	2026թ. առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
1.	Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր	ՏԿԵ նախարարություն (իրականացվել է 20 ծրագիր, որոնցից 10-ի կատարողականն անբավարար* է)	18.2	-	-
2.	Քաղաքային զարգացում		8,831.8	1,978.3	22.4
3.	Ճանապարհային ցանցի բարելավում		56,513.5	16,713.9	29.6
4.	Էներգատրոյությունավերության ծրագիր		6,810.7	3,830.1	56.2
5.	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Էկոնոմիկայի նախարարություն (իրականացվել է 11 ծրագիր, որոնցից 2-ի կատարողականն անբավարար* է)	1,275.7	306.2	24.0
6.	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում		915.4	334.0	36.5
7.	Անասնաբուժական ծառայություններ		1,977.2	1,343.6	68.0
8.	Ակադեմիական քաղաքի ստեղծում	ԿԳՄՍ նախարարություն (իրականացվել է 24 ծրագիր, որոնցից 4-ի կատարողականն անբավարար* է)	2,213.8	754.7	34.1
9.	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում		85,428.4	47,334.9	55.4
10.	Զբաղվածության ծրագիր	ԱՍՀ նախարարություն (իրականացվել է 17 ծրագիր, որոնցից 1-ի կատարողականն անբավարար* է)	4,434.8	1,348.2	30.4
11.	Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն		27,500.0	14,608.1	53.1
12.	Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	ԲՏԱ նախարարություն (իրականացվել է 5 ծրագիր, որոնցից 3-ի կատարողականն անբավարար* է)	2,426.2	51.9	2.1
13.	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում		5,034.1	1,368.3	27.2
14.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր		8,191.1	3,092.4	37.8

* Ճշտված պլանի նկատմամբ կատարողականը 50%-ից ցածր է:

Ծրագրերից մի քանիսի ցածր կատարողականը դարձել է քրոնիկ և շարունակվում է արդեն մի քանի հաշվետու ժամանակահատված, մինչդեռ դրանցից շատերն ունեն չափազանց մեծ ռազմավարական կարևորություն: Անժխտելի է, որ այդպիսին է, օրինակ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատասխանատվության ներքո իրականացվող «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման ծրագիրը», որի շրջանակներում 2026թ. առաջին կիսամյակում ճշտված պլանով ծրագրված 2,426.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է ընդամենը 51.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների ընդամենը 2.1%-ը: Ի դեպ, այս ծրագրի գծով նմանատիպ չափազանց մեծ թերակատարումներ արձանագրվում են ծրագրի մեկնարկից ի վեր բոլոր հաշվետու ժամանակահատվածներում: Նույն նախարարության մեկ այլ՝ «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագրի կատարողականը 27.2% է:

Գործող իշխանության կողմից մշտապես թմբկահարվող ճանապարհաշինությունը ևս կաղում է: ՀՀ ՏԿԵ նախարարության «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի գծով կատարողականն ընդամենը 29.6% է՝ ճշտված պլանով նախատեսված 56.5 մլրդ դրամի դիմաց ծախսվել է 16.7 մլրդ դրամ:

Փոխարենը անշեղորեն և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կտրուկ՝ 41.9%-ով աճել են «Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի գծով ծախսերը (հասնելով 2.7 մլրդ դրամի, կատարողականը՝ 91.4%), ինչը, ըստ ամենայնի, հիմնականում պայմանավորված է ընդդիմադիր հայացքներ ունեցող մի քանի խոշոր գործարարների հետ փոխկապակցված ընկերությունների նկատմամբ պետության՝ վերջին շրջանում լայն թափ ստացած հետապնդումներով:

2026թ. պետական բյուջեի ծախսերի առաջին կիսամյակի կատարման հակիրճ վերլուծությունը վկայում է, որ այս անգամ էլ ծախսերի կատարողականի հիմնական խնդիրը դրա համատարած թերակատարումն է: Ցածր կատարողականը վկայում է ոչ միայն ֆինանսական միջոցների զգալի թերօգտագործման, այլև պետական ծախսերի կառավարման արդյունավետության լուրջ խնդիրների մասին: Այն փաստը, որ կապիտալ ծախսերի կատարողականը ծայրահեղ ցածր է, իսկ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի գծով փաստացի ծախսվել է նախատեսված միջոցների շատ փոքր մասը, ցույց է տալիս, որ բյուջետային պլանավորման և դրա իրագործման միջև առկա է չափազանց մեծ խզում:

պետությունը նախատեսում է ծախսեր, սակայն չի կարողանում ապահովել դրանց՝ ամբողջությամբ և ժամանակին իրականացումը՝ սահմանափակելով տնտեսական աճի և ենթակառուցվածքների զարգացման վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ պետական բյուջեն 2026թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարվել է 67.3 մլրդ դրամ հավելուրդով՝ ծրագրված 342.4 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 39.2 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: **Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 409.7 մլրդ դրամով:** Բյուջեի հավելուրդը մասամբ պայմանավորված է եկամուտների գերակատարմամբ և հիմնականում ծախսերի ցածր կատարողականով, ինչը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների աճի: **Բացի այդ, ցածր ցուցանիշ է արձանագրվել արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով, որոնք կազմել են 3.7 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 2%-ը:**

Ի դեպ, դարձյալ աչք են զարնում բյուջետային պլանավորման ոլորտում առկա խնդիրները: 2026-ի հաստատված բյուջեով առաջին կիսամյակի համար ծրագրված էր 316.4 մլրդ դրամ պակասուրդ, որը հետագայում, տարվա ընթացքում, վերանայման արդյունքով էլ ավելի է (26.0 մլրդ դրամով) բարձրացել և կազմել է 342.4 մլրդ դրամ: Մինչդեռ փաստացի արձանագրվել է բյուջեի հավելուրդ 67.3 մլրդ դրամի չափով: **Սովորաբար ենթադրվում է, որ հաստատված բյուջեի ցուցանիշների ճշգրտում կատարվում է այն դեպքում, եթե տարվա ընթացքում փաստացի զարգացումները և/կամ ակնկալիքներն էապես տարբերվում են բյուջեով ծրագրվածից:** 2026թ. առաջին կիսամյակի բոլոր վեց ամիսներին էլ բյուջեն հավելուրդային է եղել: Հետևաբար, փաստացի զարգացումների պատճառով բյուջեի հաշվեկշռի ճշգրտումն անտրամաբանական է: Բյուջեի պակասուրդը ճշգրտելու վերոհիշյալ երկու դրդապատճառներից մնում է միայն երկրորդը՝ ակնկալիքների փոփոխությունը: Ամենայն հավանականությամբ, ընթացիկ տարում ակնկալվում էր, որ բյուջեի փաստացի ծախսերը զգալիորեն գերազանցելու են պլանավորված մեծությունը, մինչդեռ իրականում կատարվեցին նույնիսկ հաստատված բյուջեի ցուցանիշից էապես՝ 13.9%-ով կամ 253.8 մլրդ դրամով, պակաս ծախսեր:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	39.2	316.4	342.4	(67.3)	(19.6)
<u>Պակասուրդի ֆինանսավորումը՝</u>					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	(54.5)	206.7	232.0	(5.7)	(2.4)
1. Փոխառու զույր միջոցներ	102.7	72.2	72.2	1.0	1.4
2. Ֆինանսական զույր ակտիվներ	(157.2)	134.5	159.8	(6.6)	(4.2)
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	93.7	109.6	110.4	(61.6)	(55.8)
1. Փոխառու զույր միջոցներ	90.0	110.7	111.5	(68.2)	(61.2)
2. Ֆինանսական զույր ակտիվներ	3.8	(1.1)	(1.1)	6.6	(591.3)

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցներ են հանդիսացել գանձապետական պարտատոմսերը, որոնցից զուտ մուտքերը կազմել են 985.1 մլն դրամ՝ ծրագրով նախատեսված 72.2 մլրդ դրամի դիմաց:

Ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը 2026թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում կազմել է - 6.6 մլրդ դրամ՝ ծրագրված 159.8 մլրդ դրամի դիմաց, **ինչը հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների՝ առաջին կիսամյակում նախատեսված 167 մլրդ դրամ օգտագործման փոխարեն 13.4 մլրդ դրամ աճով:**

2026թ. առաջին կիսամյակի ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրներում -68.2 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները: **Արտաքին աղբյուրներից փոխառու զուտ միջոցների հաշվին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է ԱԶԲ առողջապահության որակի բարելավման ծրագրի շրջանակներում տրամադրված 1.6 մլրդ դրամ բյուջետային աջակցության վարկի (որն առաջին կիսամյակում չէր նախատեսվել) և արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված վարկային միջոցների (որոնք կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ կամ կիսամյակի ծրագրված ցուցանիշի 4.1%-ը՝ պայմանավորված ծրագրերի կատարման աստիճանով) հաշվին:** Բյուջետային աջակցության վարկերը կազմել են ծրագրված ցուցանիշի 1.2%-ը:

Համաձայն 08.01.2026թ. ուժի մեջ մտած «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության՝ պետական պարտքն իրենից ներկայացնում է կառավարության պարտքի և համայնքների պարտքի հանրագումարը: 2026թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,116 մլրդ դրամ (13,901 մլն ԱՄՆ դոլար), ՀՀ կառավարության պարտքը՝ 5,113 մլրդ դրամ (13,893 մլն ԱՄՆ դոլար), իսկ ՀՀ համայնքների պարտքը՝ 3.1 մլրդ դրամ (8.4 մլն ԱՄՆ դոլար): Դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշները նախորդ տարեվերջի համեմատ նվազել են համապատասխանաբար 3.5%-ով և 0.04%-ով: ՀՀ պետական պարտքում 2,440 մլրդ դրամը (6,629 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,677 մլրդ դրամը (7,272 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

• 2026թ. առաջին կիսամյակում ՀՀ տնտեսական ակտիվությունն աճել է 7.9%-ով, սակայն աճի կառուցվածքը մտահոգիչ է. տնտեսական ակտիվության հիմնական շարժիչներն են եղել ծառայությունները, արդյունաբերությունն ու շինարարությունը, մինչդեռ գյուղատնտեսությունում գրանցվել է 11.9% անկում: Առևտրի ոլորտի աճի տեմպը չափազանց ցածր է և գնալով դանդաղում է. հաշվետու ժամանակահատվածում այն կազմել է 0.9%՝ տնտեսական ակտիվության աճին նպաստելով ընդամենը 0.1 տոկոսային կետով:

Արտաքին առևտրի զարգացումներն էլ ավելի են խորացնում տնտեսական աճի կայունության վերաբերյալ մտահոգությունները: Առաջին կիսամյակում դոլարային արտահայտությամբ արտահանումը նվազել է 6.7%-ով, ներմուծումը աճել է 4%-ով, մինչդեռ ներմուծման իրական ծավալը նվազել է 10.3%-ով: Արդյունքում արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը վատթարացել է 21.6%-ով:

Հատկանշական է, որ 20.9%-ով կրճատվել է առևտրաշրջանառությունը ՀՀ ամենախոշոր առևտրային գործընկեր ՌԴ-ի հետ. նվազել են թե՛ ներմուծումը և թե՛ արտահանումը: Ի դեպ, ՌԴ-ի կողմից սահմանափակումների կիրառման պայմաններում արտաքին առևտրի դինամիկան կարող է ավելի վատթարանալ:

• ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով արձանագրվել է բարձր կատարողական: Առաջին կիսամյակում փաստացի եկամուտները կազմել են 1,643.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 14.7%-ով ավելի, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 106.0%:

Եկամուտների բարձր կատարողականն ինքնին չի կարող վկայել հարկաբյուջետային քաղաքականության բավարար արդյունավետության

մասին, քանի որ դրանց գերակատարումը տեղի է ունեցել միաժամանակ պետական ծախսերի զգալի թերակատարման պայմաններում:

• Պետական բյուջեի ծախսերի կատարողականը շարունակում է մնալ առավել խնդրահարույց ուղղություններից մեկը: Առաջին կիսամյակում ընդհանուր ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է ընդամենը 83.2%. դրանք թերակատարվել են 317.4 մլրդ դրամով: Թերակատարված գումարի զգալի մասը չորս նախարարությունների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով է՝ համապատասխանաբար 59.5 մլրդ դրամ, 58.9 մլրդ դրամ, 56.2 մլրդ դրամ և 42.2 մլրդ դրամ:

Արձանագրվել է կապիտալ ծախսերի խիստ ցածր կատարողական՝ ընդամենը 56.4%: Ի դեպ, կապիտալ ծախսերը նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալիորեն նվազել են՝ 28.3%-ով:

Լուրջ մտահոգության տեղիք է տալիս ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի ցածր կատարողականը, ինչը պարզապես առանձին ծրագրերի գծով պատահական կամ տեխնիկական շեղման խնդիր չէ, այլ վկայում է բյուջետային պլանավորման, ծրագրերի իրականացման և կառավարման արդյունավետության համակարգային խնդիրների առկայության մասին: Ստացվում է, որ պետությունը նախատեսում է ծախսեր, սակայն չի ապահովում դրանց՝ ամբողջությամբ և ժամանակին իրականացումը՝ սահմանափակելով տնտեսական աճի, ենթակառուցվածքների զարգացման և պետական քաղաքականության հայտարարված առաջնահերթությունների իրականացման վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը:

Վերը նշված ռազմավարական կարևորագույն ծրագրերի գծով լուրջ թերակատարումների ֆոնին ծայրահեղ մտահոգիչ է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կտրուկ՝ 41.9%-ով աճել են «Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի գծով ծախսերը (հասնելով 2.7 մլրդ դրամի, կատարողականը՝ 91.4%): Այդպիսի աննախադեպ աճի հիմնական պատճառը, ըստ ամենայնի, ընդդիմադիր հայացքներ ունեցող մի քանի խոշոր գործարարների հետ փոխկապակցված ընկերությունների նկատմամբ պետության՝ վերջին շրջանում լայն թափ ստացած հետապնդումներն են:

• **Բյուջեի եկամուտների գերակատարումը և ծախսերի թերակատարումը հանգեցրել են կանխատեսված պակասուրդի փոխարեն զգալի հավելուրդի ձևավորմանը:** 2026թ. առաջին կիսամյակի համար ճշտված ծրագրով նախատեսված 342.4 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն փաստացի արձանագրվել է 67.3 մլրդ դրամ հավելուրդ, այսինքն՝ **բյուջեի կատարումը ծրագրից շեղվել է շուրջ 409.7 մլրդ դրամով:** Հատկանշական է, որ, չնայած առաջին կիսամյակի բոլոր վեց ամիսներին բյուջեն եղել է հավելուրդային, տարվա ընթացքում վերանայման արդյունքում նախապես ծրագրված պակասուրդն էլ ավելի է բարձրացվել, մինչդեռ փաստացի ծախսերը նույնիսկ հաստատված բյուջեի ցուցանիշից են պակաս եղել՝ 253.8 մլրդ դրամով:

2026թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության համաձայն՝ բարձր տնտեսական աճի և բյուջեի եկամուտների գերակատարման հետ մեկտեղ արձանագրվել են պետական ծախսերի զգալի թերակատարում ու բյուջեից զգալի շեղումներ: Տնտեսական աճի կառուցվածքը, արտաքին առևտրային հաշվեկշռի վատթարացումը, գնաճի պահպանվող ճնշումները, կապիտալ ծախսերի անկումը, ռազմավարական ծրագրերի ցածր կատարողականը և բյուջեի փաստացի հաշվեկշռի ծրագրից հսկայական շեղումը ցույց են տալիս, որ հիմնական անլուծելի խնդիրը շարունակում է մնալ ոչ այնքան ռեսուրսների առկայությունը, որքան պետական տնտեսական քաղաքականության և կառավարման արդյունավետության ապահովումը: Առանց այս ուղղությամբ էական բարելավման՝ բարձր տնտեսական աճի և բյուջետային եկամուտների դրական ցուցանիշներն ինքնին չեն կարող վերածվել կայուն տնտեսական զարգացման որակական առաջընթացի:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: